

ՇՈՒՇԱՆԻԿ ԳՈՒԿԱՍՅԱՆ

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի
հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության
մշակման վարչության պետի տեղակալ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական
իրավունքի ամբիոնի ասպիրանտ

**ՀԱԿԱԻՐԱՎԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ,
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎՆԱՍ
ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ**

Հոդվածում վերլուծվել է վնաս պատճառած անձի հակաօրինական վարքագծի դրսևորման առանձնահատկությունների հարցը, վնաս պատճառած անձի կողմից դրսևորվող միևնույն հակաօրինական վարքագծի բնորոշման համար տարբեր եզրույթների օգտագործման խնդիրը, վնասի հատուցման հարաբերություններում տուժողի մեղքի հիմնախնդիրը, ինչպես նաև ներկայացվել են վերոնշյալ խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներ:

Հիմնարաներ- Ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ, պատճառված վնաս, հատուցում, հակաօրինական վարքագիծ, տուժողի մեղք:

Իրավաբանական գրականության մեջ որպես քաղաքացիաիրավական պատասխանատվության միակ և ընդհանուր հիմք՝ առանձնացվում է սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքների խախտումը, իսկ հակաիրավականությունը, վնասների առկայությունը, քաղաքացիական իրավունքների խախտման և վնասների միջև պատճառական կապը և մեղքը դիտարկվում են որպես պատասխանատվության պայմաններ կամ իրավական նախադրյալներ¹:

Արտապայմանագրային պատասխանատվության պայմաններից՝ վնաս պատճառողի հակաիրավական գործողությունների (անգործության) ուսումնասիրությունը և վերլուծությունը կարևորվում է նաև ապրանքների, աշխատանքների և ծառայությունների (այսուհետ՝ Ապրանքներ) թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում՝ հաշվի առնելով վնաս պատճառողի հակաօրինական վարքագծի դրսևորման առանձնահատկությունները:

Հակաիրավական է այն գործողությունը կամ անգործությունը, որը խախտում է իրավական ակտի նորմը, ինչպես նաև անձի սուբյեկտիվ իրավունքը²: Գործողությունն անձի նպատակաուղղված, կամային արարքն է, իսկ անգործությունն՝ անհրաժեշտ և պարտադիր վարքագիծ դրսևորելուց ձեռնպահ մնալը³:

Հարկ է նշել, որ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Քաղաքացիական օրենս-

գիրք) 1088-րդ հոդվածի 1-ին մասով որպես հատուցման ենթակա վնաս է դիտարկվում միայն Ապրանքների կառուցվածքային, բաղադրամասային կամ այլ թերությունների, ինչպես նաև դրանց մասին ոչ ճիշտ կամ ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու հետևանքով պատճառված վնասը: Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասից բխում է, որ վնաս պատճառած անձի հակաօրինական վարքագիծը կարող է արտահայտվել հետևյալ գործողությունների դրսևորմամբ՝

- 1. Ապրանքների կառուցվածքային, բաղադրամասային կամ այլ թերություններ թույլ տալով.
- 2. Ապրանքների մասին ոչ ճիշտ տեղեկատվություն տրամադրելով.
- 3. Ապրանքների մասին ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելով:

Մենք այն կարծիքին ենք, որ օրենսդրի կողմից Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասում «ոչ ճիշտ» կամ «ոչ բավականաչափ ճշգրիտ» եզրույթների օգտագործումը կարող է առերևույթ առաջացնել շփոթ: Մասնավորապես, «ճշգրիտ» ածականը նշանակում է ստույգ, հավաստի, իրական, «ճիշտ» ածականը՝ ճշմարիտ, ստույգ, հավաստի⁴: Այսինքն՝ Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվող «ոչ ճիշտ» կամ «ոչ բավականաչափ ճշգրիտ» ածականները բովանդակային առումով ունեն համանման իմաստ: Քաղաքացիական

www.journal.lawinstitute.am

օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասում «ճշգրիտ» ամսականից առաջ «ոչ բավականաչափ» ամսականի առկայությունն է միայն հնարավորություն տալիս «ոչ ճիշտ տեղեկատվության տրամադրում»-ը տարանջատել «ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվության տրամադրում»-ից՝ հիմք ընդունելով այն, որ առաջին դեպքում վնաս պատճառողի հակաօրինական վարքագիծը դրսևորվում է Ապրանքի մասին ամբողջական ծավալով ոչ հավաստի, իսկ մյուս դեպքում՝ մասնակի հավաստի տեղեկատվություն տրամադրելով:

Վերը նշված խնդիրը իրավակիրառ պրակտիկայում կարող է հանգեցնել վնաս պատճառած անձի կողմից դրսևորվող հակաօրինական վարքագծի՝ ճիշտ իրավաբանական որակման դժվարության և դրսևորվող վարքագծի տեսակների հստակ տարանջատման անհնարիություն: Ուշադրության է արժանի այն, որ Քաղաքացիական օրենսգրքի 1089-րդ հոդվածը, անդրադառնալով Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի համար պատասխանատու անձանց շրջանակին, որպես վերջիններիս կողմից դրսևորվող հակաօրինական վարքագիծ առանձնացնում է՝

1. Ապրանքների թերություններ թույլ տալը.
2. Ապրանքների մասին լիակատար կամ հավաստի տեղեկատվություն չտրամադրելը:

Վերը նշված նորմի և Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասի համադրված վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը վնաս պատճառած անձի կողմից դրսևորվող միևնույն հակաօրինական վարքագծի բնորոշման համար օգտագործում է երկու տարբեր եզրույթներ, որոնք, մեր կարծիքով, միմյանցից տարբերվում են բովանդակային առումով: Մասնավորապես, օրենսդրի մոտեցման համաձայն Ապրանքների մասին ոչ ճիշտ տեղեկատվության տրամադրումը նույնանում է Ապրանքների մասին հավաստի տեղեկատվություն չտրամադրելու հետ, իսկ ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվության տրամադրումը՝ լիակատար տեղեկատվություն չտրամադրելու հետ, մինչդեռ, մեր կարծիքով, դրանց միջև առկա են տարբերություններ: Եթե բովանդակային առումով «հավաստի» ամսականի օգտագործումը արտահայտում է տեղեկատվության՝ իրականությանը համապատասխանելու հանգամանքը, ապա «լիակատար տեղեկատվության տրամադրում»-ը չի նույնանում «ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն» տրամադրելու հետ, քանի որ «լիակատար տեղեկատվության տրամադրում»-ը վերաբերելի է տեղեկատվության՝ ամբողջական ծավալով տրամադրմանը, այլ ոչ թե տեղեկատվության ստույգ լինելուն: Հաշվի առնելով վերը նշվածը՝ գտնում ենք, որ վնաս պատճառած անձի հա-

կաօրինական վարքագծի բնորոշման հարցում օրենսդրի կողմից պետք է որդեգրվի միասնական, նույնաբնույթ մոտեցում, ինչը կապահովի ՀՀ Մահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի բազմաթիվ գործերով արձանագրված իրավական որոշակիության սկզբունքի հետևողական կենսագործումը:

Սա պայմանավորված է նախ և առաջ նրանով, որ Քաղաքացիական օրենսգրքի վկայակոչված հոդվածներում օգտագործվող «ոչ ճիշտ» կամ «ոչ բավականաչափ ճշգրիտ» տեղեկատվություն, «լիակատար» կամ «հավաստի» տեղեկատվություն եզրույթները գնահատողական բնույթի կատեգորիաներ են, ինչը գործնականում կարող է հանգեցնել նույն իրավիճակում գտնվող սուբյեկտների կողմից դրսևորվող վարքագծի որակման դեպքում տարբերակվող վերաբերմունքի դրսևորման և կամայական մոտեցման վտանգի:

Մենք այն համոզման ենք, որ օրենքի կանխատեսելիության, որոշակիության և հստակության սկզբունքի երաշխավորման նպատակով որպես վնաս պատճառած անձի հակաօրինական վարքագծի տեսակ պետք է առանձնացնել Ապրանքի վերաբերյալ ոչ հավաստի տեղեկություններ տրամադրելը (ամբողջությամբ կամ մասնակիորեն ապրանքի մասին իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ տրամադրելը) և Ապրանքի վերաբերյալ ոչ ամբողջական տեղեկություններ տրամադրելը (Ապրանքի վերաբերյալ ամբողջական ծավալով անհրաժեշտ տեղեկատվություն չտրամադրելը): Ուստի, առաջարկում ենք Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասում և 1089-րդ հոդվածի 3-րդ մասում «ոչ ճիշտ կամ ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն», «լիակատար կամ հավաստի տեղեկատվություն» եզրույթները համապատասխանաբար փոխարինել «ապրանքի (աշխատանքի, ծառայության) վերաբերյալ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ» եզրույթներով: Հակաօրինական վարքագծի այս տեսակների առանձնացումը կապահովվի անհրաժեշտ երաշխիքներ դրանց հստակ տարանջատման և դրսևորվող վարքագծի ճիշտ որակման համար:

Այժմ անդրադառնանք՝ Ապրանքների թերություններ թույլ տալուն՝ որպես հակաօրինական վարքագծի առանձին տեսակի: Հարկ է նկատել, որ մասնագիտական գրականության մեջ գլխավորապես առանձնացվում են ապրանքների երեք խումբ թերություններ՝ արտադրական, կառուցվածքային և ոչ բավարար նախազգուշացման հետ կապված⁸: Ընդ որում, ապրանքի թերություն ունենալու հարցի որակումը տարբեր լուծումներ է ստացել ամերիկյան և եվրոպական իրավական համակարգերում:

www.journal.lawinstitute.am

Մասնավորապես, Եվրոպական Միության 1985 թվականի 85/374 դիրեկտիվի 6-րդ հոդվածով սահմանվում է, որ ապրանքը թերություն ունեցող է, եթե այն չի ապահովում այն անվտանգությունը, որը անձն իրավունք ուներ ակնկալել: Ապրանքը չի կարող համարվել թերություն ունեցող միայն այն պատճառով, որ հետազայում շրջանառության մեջ է դրվել առավել որակյալ ապրանք⁹: Այսինքն՝ եվրոպական երկրներում չեն առանձնացվում ապրանքի թերությունների առանձին տեսակներ, իսկ ապրանքի թերություն ունենալը կախվածության մեջ է դրվում՝ դրա անվտանգության ապահովման հատկությունից: Ամերիկյան իրավական համակարգում առանձնացվում են ապրանքների երեք խումբ թերություններ: Մասնավորապես, ապրանքը համարվում է թերություն ունեցող, եթե վաճառքի կամ բաշխման ժամանակ այն ունի արտադրական, կառուցվածքային թերություններ կամ հանդիսանում է թերություն ունեցող՝ ոչ բավարար ցուցումների կամ նախագույշացման պատճառով¹⁰:

Ինչպես տեսնում ենք, եվրոպական երկրներում ապրանքի թերություն ունենալը անմիջականորեն առնչվում է դրա անվտանգության հետ, և օրենսդրորեն չեն առանձնացվում ապրանքների թերությունների առանձին տեսակներ, մինչդեռ անգլո-ամերիկյան իրավական համակարգում հստակ տարանջատում է դրվում ապրանքների թերությունների տեսակների միջև:

Քաղաքացիական օրենսգրքի վերլուծությունը վկայում է, որ օրենսդրորեն չեն սահմանափակվում Ապրանքների թերությունների առանձին տեսակները: Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասում որպես Ապրանքի թերությունների տեսակներ ուղղակիորեն առանձնացվում են կառուցվածքային, բաղադրամասային թերությունները՝ միաժամանակ չբացառելով թերությունների այլ տեսակների առկայությունը: Եթե կառուցվածքային թերությունները Ապրանքի կառուցվածքին վերաբերելի թերություններն են, ապա բաղադրամասային թերությունները ապրանքի բաղկացուցիչ մասերին վերաբերելի թերություններն են: Ինչ վերաբերում է Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվող «այլ թերություններ» եզրույթին, ապա հարկ է նշել, որ որպես այդպիսին կարող են հանդիսանալ Ապրանքի արտադրական թերությունները, և բոլոր այն թերությունները, որոնք ունեն անձի կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու հատկություն:

Այս առումով ուշադրության է արժանի այն, որ Քաղաքացիական օրենսգրքով Ապրանքների մասին ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ տրամադրելը դիտարկվում է որպես վնաս

պատճառած անձի կողմից դրսևորվող հակաօրինական վարքագծի առանձին տեսակ, և չի նույնանում Ապրանքի թերություն թույլ տալու հետ¹¹: Մենք կարծում ենք, որ նման տարբերակումը հիմնավոր չէ, քանի որ Ապրանքի վերաբերյալ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկությունների տրամադրման արդյունքում անձի կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելը արդեն իսկ վկայում է, որ տվյալ Ապրանքը թերություն ունեցող է:

Վերը նշվածը հիմնավորվում է «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի իրավակարգավորման լույսի ներքո, որի համաձայն Ապրանքի թերությունը դրա անհամապատասխանությունն է նորմատիվ փաստաթղթերին, պայմանագրի պայմաններին կամ Ապրանքի որակին սովորաբար ներկայացվող պահանջներին: Նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով որպես նորմատիվ փաստաթղթեր առանձնացվում են Ապրանքների վերաբերյալ պարտադիր պահանջներ սահմանող օրենքները, օրենքով նախատեսված այլ իրավական ակտերը: Միաժամանակ, Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում, 11-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրվում է արտադրողի (վաճառողի, կատարողի)՝ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) վերաբերյալ անհրաժեշտ և ստույգ տեղեկատվություն տրամադրելու պարտականությունը:

Վերը նշված իրավանորմների համադրված վերլուծությունից կարող ենք հանգել այն եզրահանգման, որ Ապրանքի վերաբերյալ անհրաժեշտ և ստույգ տեղեկատվություն տրամադրելու պահանջը նորմատիվ փաստաթղթով ներկայացվող պահանջ է, իսկ այդ պահանջին անհամապատասխանությունը՝ Ապրանքի թերություն:

Հետևաբար, Ապրանքների վերաբերյալ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկատվության տրամադրումը հանդիսանում է Ապրանքի թերություն, ուստի կարծում ենք՝ օրենսդրորեն բացակայում է հակաօրինական վարքագծի այդ տեսակի՝ Ապրանքի այլ թերություններից տարանջատելու անհրաժեշտությունը: Մեր համոզմամբ, Ապրանքների թերությունների նշված տեսակները միմյանցից տարբերվում են միայն նրանով, որ Ապրանքի կառուցվածքային, բաղադրամասային և արտադրական թերությունները անմիջականորեն կապված են ապրանքի ֆիզիկական «էության» կամ այլ կերպ ասած դրա ֆիզիկական հատկությունների հետ, քանի որ անձի կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս է պատճառվում Ապրանքի ոչ բավարար ֆիզիկական հատկությունների արդյունքում, մինչդեռ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղե-

կուրյուններ տրամադրելու հետևանքով պատճառված վնասը պայմանավորված չէ Ապրանքի ոչ բավարար ֆիզիկական հատկություններով: Հաշվի առնելով վերը նշվածը՝ գտնում ենք, որ Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասում և 1089-րդ հոդվածի 3-րդ մասում Ապրանքների վերաբերյալ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկությունների տրամադրումը չպետք է առանձնացվի Ապրանքների կառուցվածքային, բաղադրամասային կամ այլ թերություններ թույլ տալուց՝ որպես վնաս պատճառած անձի հակաօրինական վարքագծի առանձին տեսակ, այլ պետք է դիտարկվի որպես Ապրանքի թերության մեկ այլ առանձին տեսակ:

Վերլուծելով վնաս պատճառողի գործողությունների հակահրավակականության դրսևորման առանձնահատկությունները, անդրադառնանք նաև տուժողի գործողություններին և մեղքի ձևին՝ հաշվի առնելով դրանց հնարավոր ազդեցությունը վնասի հատուցման մերժման կամ հատուցման չափի նվազեցման վրա: Ինչպես նշում է Գ.Բեքմեզյանը, երբ վնասը պատճառվում է տուժողի այնպիսի գործողությունների կամ անգործության հետևանքով, որից ակնհայտ է դառնում, որ վերջինս գիտակցել և ցանկացել է վնասի առաջացումը, ապա վերջինիս մեղքն առկա է¹²:

Քաղաքացիական օրենսգրքի 1076-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ տուժողի դիտավորության հետևանքով ծագած վնասը չի հատուցվում: Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությամբ սահմանվում է, որ եթե տուժողի կուպիտ անգոչությունը նպաստել է վնասի առաջացմանը կամ մեծացմանը, հատուցման չափը պետք է նվազեցվի՝ կախված տուժողի և վնաս պատճառողի մեղքի աստիճանից, իսկ 2-րդ պարբերության համաձայն՝ տուժողի կուպիտ անգոչության առկայության և վնաս պատճառողի մեղքի բացակայության, այն դեպքերում, երբ պատասխանատվությունը վրա է հասնում մեղքից անկախ, հատուցման չափը կարող է նվազեցվել կամ վնասի հատուցումը կարող է մերժվել, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Քաղաքացու կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու դեպքում վնասի հատուցումը չի կարող մերժվել:

Վերը նշված դրույթների համադրված վերլուծությունից բխում է, որ օրենսդրությամբ վնասը չհատուցելու, դրա հատուցումը մերժելու կամ չափը նվազեցնելու հիմք է միայն տուժողի դիտավորությունը և կուպիտ անգոչությունը, իսկ հասարակ անգոչությունը իրավական որևէ հետևանք չի առաջացնում:

Պրոֆեսոր Տ.Կ Բարսեղյանը, անդրադառնալով մեղքի ձևի հետ կապված հարցերին, որպես դի-

տավորություն է դիտարկում պարտականությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումից միտումնավոր ձեռնպահ մնալը: Անգոչության դեպքում անձը պարտականությունների կատարման նկատմամբ չի ցուցաբերում պարտավորությունների բնույթով և շրջանառության պայմաններով պահանջվող հոգատարություն ու շրջահայացություն: Կուպիտ անգոչության պարագայում անձը պարտականությունների կատարման նկատմամբ չի ցուցաբերում տարրական հոգատարություն, հասարակական անգոչության դեպքում՝ այնպիսի շրջահայացություն և հոգատարություն, ինչպիսին ցուցաբերում է սեփական գործերի նկատմամբ¹³:

Հաշվի առնելով մեղքի դրսևորման առանձնահատկությունները և Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված դեպքերում դրա ազդեցությունը վնասի հատուցման հարաբերությունների նկատմամբ, գտնում ենք, որ Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում վնասը չի հատուցվի տուժողի դիտավորության առկայության պարագայում: Ինչ վերաբերում է տուժողի կուպիտ անգոչությանը, ապա գտնում ենք, որ Քաղաքացիական օրենսգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերության իրավակարգավորման լույսի ներքո վնասի հատուցման չափը չի կարող նվազեցվել, քանի որ օրենսդիրը հատուցման չափը նվազեցնելու համար նախատեսում է երկու պայմանների միաժամանակյա առկայություն¹⁴ և՛ տուժողի, և՛ վնաս պատճառողի մեղքի, մինչդեռ, Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի համար պատասխանատվությունը վրա է հասնում անկախ վնաս պատճառողի մեղքից: Միաժամանակ գտնում ենք, որ Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում դրա չափի նվազեցման կամ վնասի հատուցման մերժման համար որպես հիմք կարող է ծառայել Քաղաքացիական օրենսգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը:

Գրականության մեջ արտահայտված տեսակետի համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 1076-րդ հոդվածը (2-րդ մասի 2-րդ կետ) կիրառելի է շրջապատի համար առավել վտանգ ստեղծող գործունեությամբ վնաս պատճառելու դեպքում¹⁵: Խնդիրը նրանում է, որ Քաղաքացիական օրենսգրքի 1076-րդ հոդվածը վնասի հատուցման հարցերի կարգավորմանն ուղղված ընդհանուր դրույթ է, այնուամենայնիվ օրենսդիրը, վնաս պատճառելուց բխող պարտավորությունների կարգավորմանն ուղղված հոդվածներից միայն 1072-րդ հոդվածի 1-ին մասում է նախատեսում շրջապատի համար առավել վտանգ ստեղծող գործունեությամբ պատճառված վնասի դեպքում դատարանի կողմից այդ

հիմքով առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջը պատասխանատվությունից լրիվ կամ մասնակիորեն ազատելու հնարավորություն՝ ուղղակիորեն հղում կատարելով Քաղաքացիական օրենսգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ մասին, ինչը կարող է իրավակիրառ պրակտիկայում հանգեցնել վերոնշյալ դրույթների տարածական մեկնաբանման: Մասնավորապես, հարց կարող է առաջանալ, թե արդյոք սա նշանակում է միայն առավել վտանգի աղբյուրի դեպքում Քաղաքացիական օրենսգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքով վնասի հատուցման չափի նվազեցում կամ վնասի՝ հատուցման մերժման հնարավորություն, թե ոչ: Գտնում ենք, որ Քաղաքացիական օրենսգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը կարող է հանդիսանալ իրավական հիմք ոչ միայն առավել վտանգի աղբյուրով, այլ նաև Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում վնասի հատուցման մերժման կամ դրա չափի նվազեցման համար: Քաղաքացիական օրենսգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունից բխում է, որ վնասի հատուցման մերժման կամ դրա չափի նվազեցման համար պարտադիր են հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը՝

1. տուժողի գործողություններում կոպիտ անզգուշության առկայություն,
2. մեղքից անկախ պատասխանատվության առաջացում,
3. նշված կանոնից օրենսդրությամբ ուղղակիորեն նախատեսված բացառություն:

Համադրելով վերը թվարկված պայմանները Քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլխի 3-րդ պարագրաֆի հետ՝ կարող ենք արձանագրել, որ Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի համար ևս նախատեսվում է առանց մեղքի պատասխանատվություն, առկա չէ որևէ դրույթ, որը կբացառի Քաղաքացիական օրենսգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության կիրառումը, հետևաբար տուժողի կոպիտ անզգուշության դեպքում վնասի հատուցումը կարող է մերժվել կամ դրա չափը կարող է նվազեցվել: Ընդ որում, պետք է նաև ի նկատի ունենալ, որ Քաղաքացիական օրենսգրքի 1091-րդ հոդվածով նախատեսվում է վնաս պատճառած անձին պատասխանատվությունից ազատելու հնարավորություն՝ սպառողի կողմից Ապրանքների օգտագործման կամ պահպանման կանոնները խախտելու դեպքում: Դիտարկելով վերը նշված հոդվածը Քաղաքացիական օրենսգրքի 1076-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 2-րդ պարբերության համատեքստում՝ կարող ենք արձանագրել, որ սա ևս վկայում է, որ Ապրանքների օգտագործման կամ պահպանման կանոնների խախտումը կարող է հետևանք լինել տուժողի դիտավորության կամ կոպիտ անզգուշության, որի պարագայում վնաս պատճառած անձը ազատվում կամ կարող է ազատվել պատասխանատվությունից:

¹ Տե՛ս, Բարսեղյան Ս.Կ., Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը, Երևանի պետ. համալսարան: Երևանի համալ. իրատ., Երևան, 2006, էջեր 223, 226-227:

² Տե՛ս, Բեքմեզյան Գ.Հ., Հակաիրավական արարքը որպես արտապայմանագրային պարտավորությունների առաջացման պայման, «Բանբեր Երևանի Համալսարանի. Իրավագիտություն», 2015, N 3 (18) էջեր 60-61:

³ Տե՛ս, ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015թ. թիվ ԵԿԳ/2128/02/13 քաղաքացիական գործով արտահայտած դիրքորոշումը:

⁴ Տե՛ս, Աղայան Է.Բ, Արդի Հայերենի Բացատրական բառարան, «Հայաստան» Հրատարակչություն, Երևան, 1976, էջեր 942, 946:

⁵ Օրինակ՝ Երևան քաղաքի Մալաթիա-Մեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵՄԳ/0655/02/11 քաղաքացիական գործով հայցվորը ներկայացրել է վնասի հատուցման պահանջ, քանի որ Հայաստանի առիթմոլոգիական սրտաբանական կենտրոնում վիրահատության արդյունքում իրեն պետք է տեղադրվեր երկու խոռոչանի սրտի խթանիչ, որը պետք է աշխատեր 10 տարի, սակայն տեղադրվել է PHILOS DR մոդելի երկխոռոչանի խթանիչ, որի գործարանային նախատեսված ծառայության ժամկետը 5 տարի 5 ամիս է: Գործի քննության արդյունքում հայցապահանջը բավարարվել է մասնակի, որպես կիրառելի իրավունք վկայակոչվել են Քաղաքացիական օրենսգրքի 1088-1089-րդ հոդվածները, սակայն դատական ակտում հստակ անդրադարձ չի կատարվել այն հարցին, թե 1088-րդ հոդվածի հիպոթեզում ամրագրված հակաօրինական վարքագծի որ տեսակն է թույլ տվել պատասխանողը, այլ արձանագրվել է, որ վնասը պատճառվել է ծառայությունների ոչ պատշաճ մատուցման արդյունքում: Մեր կարծիքով, տվյալ գործով վնաս պատճառողի

հակաօրինական վարքագիծը դրսևորվել է մատուցվող ծառայության վերաբերյալ ոչ հավաստի տեղեկատվություն տրամադրելով:

⁶ «Լիակատար» բառը նշանակում է ոչ մասնակի, լրիվ, ամբողջական, այդ մասին առավել մանրամասն Տե՛ս, Ադայան Է.Բ, Արդի Հայերենի Բացատրական բառարան, «Հայաստան» Հրատարակչություն, Երևան, 1976, էջ 528:

⁷ Տե՛ս, օրինակ ՀՀ Սահմանադրական դատարանի 27.12.2016 թվականի ՍԳՈ-1334 որոշումը, որտեղ արձանագրվել է, որ իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից՝ օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները, իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ: 14.03.2017 թվականի ՍԳՈ-1357 որոշմամբ արձանագրվել է նաև, որ իրավական որոշակիության սկզբունքը իրավունքի գերակայության գլխավոր պահանջներից մեկն է, և դրա գործողությունը տարածվում է բոլոր օրենքների վրա՝ անկախ այն հանգամանքից, թե վերջիններս ունեն հիմնական իրավունք սահմանափակող, թե հիմնական իրավունքի իրացումը կարգավորող բնույթ: Իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ առավել մանրամասն տես ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԳՈ-630, ՍԳՈ-731, ՍԳՈ-753, ՍԳՈ-984, ՍԳՈ-1142, ՍԳՈ-1176, ՍԳՈ-1213, ՍԳՈ-1270 որոշումները:

⁸ Տե՛ս, Reimann, Mathias, «Liability for defective products at the beginning of the twenty-first century: Emergence of a worldwide standard» The American Journal of Comparative Law 51, 2003, N 4, էջ 769:

⁹ Տե՛ս, Council Directive 85/374/EEC of 25 July 1985 «On the approximation of the laws, regulations and administrative provisions of the Member States concerning liability for defective products», Official Journal of the European Communities, L 210, 1985, N 07/08:

¹⁰ Տե՛ս, Restatement of the Law, Third: Torts: Products Liability, 1998, հասանելի է https://ius.unibas.ch/fileadmin/user_upload/fe/file/Vorlesung_vom_13.1._Restatement_of_the_law_thirds_tords_Product_Liability.pdf հղումով՝ 23.03.2017թ. դրությամբ:

¹¹ Չնայած նրան, որ Քաղաքացիական օրենսգրքի 1089-1091-րդ հոդվածներում որպես միասնական եզր օգտագործվում է «Ապրանքի թերություններ» տերմինը, սակայն Քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասը որպես հակաօրինական վարքագծի առանձին տեսակ է առանձնացնում Ապրանքների մասին ոչ ճիշտ կամ ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելը:

¹² Տե՛ս, Բեքմեզյան Գ.Հ., Տուժողի մեղքը որպես վնասի հատուցման ծավալների նվազեցման պայման, «Բանբեր Երևանի Համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2011, N 135.3, էջ 42:

¹³ Տե՛ս, Բարսեղյան Տ.Կ., Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը, Երևանի պետ. համալսարան: Երևանի համալ. իրատ., Երևան, 2006, էջեր 266-267:

¹⁴ Հարկ է նշել, որ ՀՀ Սահմանադրական դատարանը 02.02.2016թ. ՍԳՈ-1253 որոշման մեջ, անդրադառնալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերությամբ նախատեսված կանոններին, արտահայտել է դիրքորոշում այն մասին, որ դրանք կիրառելի չեն ինքնուրույն իրավակարգավորման օբյեկտների թվարկումների նկատմամբ, մինչդեռ Քաղաքացիական օրենսգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությամբ տվյալ նորմի կիրառման համար ամրագրված է երկու միաժամանակյա պայմանների առկայության պահանջ, և առկա չեն ինքնուրույն իրավակարգավորման օբյեկտների թվարկումներ:

¹⁵ Տե՛ս, Բեքմեզյան Գ.Հ., Տուժողի մեղքը որպես վնասի հատուցման ծավալների նվազեցման պայման, «Բանբեր Երևանի Համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2011, N 135.3, էջ 43:

Шупаник Гукасян

Аспирант кафедры гражданского права юридического факультета Ереванского государственного университета
Заместитель начальника департамента развития антикоррупционной и пенитенциарной политики министерства юстиции РА

РЕЗЮМЕ

*Особенности незаконного поведения в случае
вреда, причиненного вследствие недостатков товаров, работ и услуг*

В статье анализируются особенности противоправного поведения причинителя вреда, проблема использования разных терминов для определения того же самого противоправного поведения причинителя вреда, проблема вины жертвы в отношениях возмещения вреда, а также представлены предложения по решению вышеупомянутых проблем.

Ключевые слова: продукты, работы, услуги, вред, компенсация, противоправное поведение, вина жертвы.

Shushanik Ghukasyan

PhD student of the Chair of Civil Law of the Faculty of Law of the Yerevan State University
The Deputy Head of Anticorruption and Penitentiary Policy Development Department of the Ministry of Justice of RA

SUMMARY

Peculiarities of illegal behavior in case of damage caused by shortcomings of goods, works and services

The article analyzes the peculiarities of illegal behaviour of the person who has caused damage, the problem of using different terms for the definition of the same illegal act demonstrated by the person who has caused damage, the issue of victim's fault in damage compensation matters, as well as proposals for solving the above mentioned problems were presented.

Keywords: Products, works, services, damage, compensation, illegal act, the victim's fault.